



Եվրոպական
հանձնաժողով

ԵՎՐՈՊԱՊԱԿՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Բրյուսել, 25.3.2015
SWD (2015) 63 վերջնական

Աշխատակազմի համատեղ աշխատանքային փաստաթուղթ

**Հայաստանում Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում
2014 թ. ընթացքում գրանցված ձեռքբերումներն ու առաջարկություններ հետագա
գործողությունների վերաբերյալ**

Փաստաթուղթը ուղեկցում է

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԽՈՐՀՐԴԻՆ , ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ, ՏԱՐԱԾՍՇՐՋԱՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Եվրոպական հարևանության գաղաքականության
իրականացումը 2014թ.**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն զեկույցը ներկայացնում է 2014թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված առաջընթացն ու ձեռքբերումները: Նշված ժամանակահատվածից դուրս տեղի ունեցած զարգացումները հաշվի են առնվել ըստ կարևորության: Տվյալ փաստաթուղթը Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի գնահատումը չէ: Արևելյան գործընկերության (ԱԳ) իրականացման զեկույցում ներկայացված են տեղեկություններ տարածաշրջանային և աշխարհագրական ավելի լայն հատվածների խնդիրների վերաբերյալ:

2014թ. հոկտեմբերին Հայաստանը ստորագրել է Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու մասին պայմանագիրը: Դրա ստորագրման նախապատրաստման փուլում, որն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ին, Հայաստանի կառավարության կողմից իրականացվող քաղաքականության 20 ոլորտներում կյանքի է կոչվել վարչական և իրավական միջոցառումների ճանապարհային քարտեզը: Չնայած 2013թ. սեպտեմբերին կայացրած որոշմանը՝ չնախատրագրել ԵՄ-ի հետ բանակցված Ասոցացման համաձայնագիրը, այդ թվում՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը (ԱՀ/ԽՀԱԱՀ), Հայաստանը և ԵՄ-ը 2014 թ-ին շարունակել են իրենց քաղաքական և տնտեսական երկխոսությունն այն ոլորտների շուրջ, որոնք համահունչ են Հայաստանի ստանձնած ԵՏՄ նոր միջազգային պարտավորություններին: Այս համատեքստում 2014թ. նոյեմբերին ԵՄ-ը և Հայաստանը մեկնարկեցին հետագա հարաբերությունների խորացմանն ուղղված համագործակցության հնարավոր ոլորտների սահմանման աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման շուրջ համաձայնագրերն ուժի մեջ են մտել 2014 թ. հունվարին: Մարտին ուժի մեջ է մտել Համաձայնագիրը, որը թույլ է տալիս Հայաստանին մասնակցել ԵՄ ծրագրերում և գործակալություններում:

Հայաստանում թույլ առաջընթաց է արձանագրվել համընդգրկուն և կայուն ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտներում: 2014 թ-ի ապրիլին Սահմանադրական բարեփոխումների հատուկ հանձնաժողովը ներկայացրել է իր հայեցակարգի նախագիծը, որով առաջարկել է նախագահական համակարգից անցում կատարել խորհրդարանականի, փոփոխություններ կատարել ընտրական համակարգում, ապահովել ուժերի հավասարակշռությունը և մարդու իրավունքների առավել պաշտպանությունը: Սակայն, այս բարեփոխումների վերաբերյալ առաջարկները չեն ընդունվել հասարակության լայն շերտերի և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից:

2014թ. փետրվարին ընդունվել է մարդու իրավունքների գործողությունների ծրագիրը, որը կարևոր քայլ է համարվում այդ ոլորտում առաջընթաց գրանցելու ուղղությամբ: Մակայն, այն չի ներառում առաջնային ոլորտներ՝ մասնավորապես, Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիային համապատասխանությունը: Ընդհանուր առմամբ, պահպանվել է միավորումներ կազմելու ազատության իրավունքը: Միևնույն ժամանակ բացակայում է Խտրականության դեմ համապարփակ օրենսդրությունը՝ չնայած ձեռնարկված որոշ իրավական միջոցառումների: Խտրականության դեմ համապարփակ ռազմավարության մշակումը դեռևս ավարտված չէ, չնայած որոշ օրենսդրական միջոցառումներ արդեն ձեռնարկվել են: Խտրականության դեմ ռազմավարությունը, որը կօգնեք առավել հետևողական իրավական քայլեր իրականացնելու, մնում է որպես նախագիծ: Շոշափելի զարգացումներ չեն գրանցվել նաև մարդու իրավունքների և հիմնարար հիմունքների վերաբերյալ օրենսդրության իրականացման և հարկադիր կիրառման հարցում: Որոշ բարեփոխումներ մնացել են մշակման փուլում: Վերջիններիս իրավական ուժ տալու համար անհրաժեշտ է ընդհամենը մի քանի քայլ: Նախկին զեկույցներում նշված բացերը դեռևս պահպանվում են: Մասնավորապես, դրանք վերաբերում են դատական համակարգում վստահության բացակայությանը և կոռուպցիայի դեմ պայքարին:

Հայաստանում չնչին առաջընթաց է գրանցվել անվճար իրավական օգնության իրավունքի և դատական մարմիններում դատավորների անկախության հարցերում: Առավել թափանցիկ է դարձել դատավորների նշանակման գործընթացը, սակայն հասարակությունը շարունակում է չվստահել դատական համակարգին: 2014թ. Թրանսփարենսի Ինթերնեյշնլի կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի տվյալներով՝ Հայաստանը զբաղեցնում է 94-րդ տեղը 175 երկրների ցանկում:

Հայաստանը շարունակում է հիմնավորված մակրոտնտեսական քաղաքականություն և Համապատասխան քայլեր իրականացնել: Առաջընթաց է գրանցվել հատկապես, գործողությունների ծրագրի նպատակների իրականացման հարցում, մակրոտնտեսական քաղաքականության, աղքատության նվազեցման և սոցիալական համախմբվածության ոլորտներում: 2014թ-ի ընթացքում տնտեսական ակտիվությունը դանդաղել էր, ինչը պայմանավորված էր Ռուսաստանի Դաշնության տնտեսական անկմամբ և ԵՄ-ի ցածր պահանջարկով: Շարունակվել են հարկային վարչարարության բարեփոխումները: Տնտեսության բարեփոխման ուղղությամբ բավարար գործողություններ չեն իրականացվել, քանի որ շեշտը հիմնականում դրվել էր գյուղատնտեսության և հանքարդյունաբերության վրա: Անհրաժեշտ բարեփոխումների շնորհիվ Հայաստանը կարող էր ավելի քիչ կախում ունենալ արտաքին ցնցումներից, մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունից:

Հայաստանը մեծապես կախված է հիմնական ներմուծվող էներգակիրներից: Երկրի ներսում արտադրվող էներգիայի հիմնական աղբյուրներն են ՀԷԿ-երը և Մեծամորի ատոմային կայանը: Մեծամորի ատոմային կայանի վաղաժամ փակումը և շահագործումից դուրս բերելը

մնում է ԵՄ-ի հիմնական նպատակը և գտնվում է ԵՀՔ Գործողությունների Ծրագրի շրջանակներում: Ատոմակայանը չի համապատասխանում ներկայիս ընդունված ատոմային անվտանգության միջազգային չափանիշներին, և այն պետք է հնարավորինս արագ դուրս բերվի շահագործումից: Նոր կայանը պետք է համապատասխանի միջազգային անվտանգության վերջին չափանիշներին: Սակայն, ՀՀ կառավարությունը հայտարարել է մինչև 2016թ. Մեծամորի ատոմային կայանի գործարկման երկարաձգման մասին՝ հաստատելով, որ այն կստուգվի գործընկերների կողմից 2015թ-ի ընթացքում: Դա համահունչ է այս ոլորտի ԵՄ քաղաքականության նպատակների հետ, ինչը համարվում է ատոմային անվտանգության ամենաբարձր չափանիշների և անվտանգության մշակույթի խթանումն ամբողջ աշխարհում:

Անցյալ տարի լրացավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հրադադարի մասին ստորագրված համաձայնագրի 20-րդ տարին՝ ձգձգվող բանակցությունների համատեքստում: Հայաստանի և Ադրբեյջանի նախագահները մի շարք հանդիպումներ են ունեցել՝ Սոչի քաղաքում, Նյուպորտում կայացած ՆԱՏՕ-ի զագաթաժողովի շրջանակներում և Փարիզում, որոնց ընթացքում վերահաստատել են հակամարտության խաղաղ կարգավորման ուղիներ փնտրելու վերաբերյալ իրենց դիրքորոշումը: Մտահոգության լուրջ խնդիր է շարունակում մնալ երկրում անվտանգության պահպանումը, քանի որ հրադադարի խախտման դեպքերն ու սահմանային միջադեպերը հասել են ռեկորդային մակարդակի: Շարունակվում է հակամարտության շուրջ ռազմատենչ հռետորաբանությունը և սպառազինության ավելացման մրցավազքը: ԵՄ-ը շարունակում է աջակցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին և խաղաղաստեղծ գործողություններին: Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչը/ Եվրոպական հանձնաժողովի նախագահի տեղակալը աջակցում է խաղաղաստեղծ ջանքերին, այդ թվում Հարավային Կովկասի և Վրաստանի հակամարտության ԵՄ նոր հատուկ ներկայացուցիչ՝ Հերբերտ Սալբերի միջոցով: Բարձր մակարդակի հանդիպումներին մասնակցելու նպատակով՝ նա կանոնավոր կերպով այցելել է տարածաշրջան և հաճախակի շփումներ ունեցել համապատասխան գործընկերների հետ:

Չնայած 2014թ. օգոստոսին կայացած ՀՀ նախագահի երդմնակալության արարողությանը մասնակցելու Թուրքիայի նախագահի հրավերքին, Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններում իրական առաջընթաց չի գրանցվել: 2015թ-ին հարյուր տարի առաջ տեղի ունեցած դեպքերին նվիրված միջոցառումները նոր փորձություն կդառնան երկկողմանի հարաբերությունների համար: ԵՄ-ը շարունակում է աջակցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և հորդորում է երկու երկրներին հավատարիմ մնալ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատման գործընթացին:

Ընդհանուր առմամբ, Հայաստանը թույլ առաջընթաց է գրանցել ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ՝ որոշ ջանքեր գործադրելով խորը և կայուն ժողովրդավարության հաստատման հարցում և ներդնելով ողջամիտ մակրոտնտեսական քաղաքականություններն ու կառուցվածքային բարեփոխումները: Մինչ Հայաստանը որոշ

ռազմավարական քայլեր է ձեռնարկել սահմանադրական բարեփոխումների ուղղությամբ՝ առաջարկվել է իրականացնել և հարկադիր կիրառվել ավելի կոնկրետ օրենսդրական միջոցառումներ: Ողջունելի կլինեն նաև մարդու իրավունքների և հասարակության առջև Հայաստանի պարտավորությունների վերաբերյալ իրազեկման բարձրացումը: Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունից հետո ԵՄ-Հայաստան առևտրային հարաբերությունները վերասահմանման կարիք ունեն:

2014 թ-ի ընթացքում ԵՀԲ-ի իրականացման ուղղությամբ կատարված առաջընթացի գնահատման հիման վրա, Հայաստանն առաջիկա տարվա ընթացքում պետք է ջանքերը կենտրոնացնի հետևյալի շուրջ՝

- Փոփոխություններ կատարել ընտրական օրենսդրության մեջ՝ համաձայն ԵԱՀԿ/Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի արված առաջարկությունների մինչև 2017թ-ի խորհրդարանական ընտրությունները:
- Ընդունել և կյանքի կոչել խտրականության դեմ համապարփակ օրենքը, հսկել կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքի իրականացումը, հետագա քայլեր ձեռնարկել այս ոլորտի օրենսդրության և ԵՄ օրենսդրության համապատասխանեցման ուղղությամբ: Ընդունել ընտանեկան բռնության մասին օրենքը:
- Հետաքննել մարդու իրավունքների պաշտպանների վրա հարձակման և սահաբեկման դեպքերը, ապահովել օրենքի արդյունավետ կիրառումը, այդ թվում՝ 2008թ. մարտի բախումների ընթացքում տեղի ունեցած մահվան դեպքերի, ինչպես նաև կալանքի տակ գտնվողների հանդեպ վատ վերաբերմունքի մասին տեղեկությունների և պատշաճ իրավական գործընթացի խախտումների վերաբերյալ:
- Ավարտի հասցնել խղճի և կրոնի ազատության մասին օրենքի նախագիծը:
- Արագացնել դատական և հարկադիր մարմինների բարեփոխումներն ու իրականացնել ՀՀ իշխանությունների բարեփոխմանն առնչվող օրակարգը, օրինակ՝ դատական մարմինները դարձնել ավելի անկախ, բարելավել դատավորների վերապատրաստումը, վերանայել Քրեական ընթացակարգի մասին օրենսգիրքը՝ բռնության մասին օրենսդրությունը համահունչ դարձնելով Բռնության դեմ կոնվենցիայի 1-ին Հոդվածին: Նշանակել կոնստակտային անձ Եվրոջասթ-ում՝ ավելի սերտ դատական համագործակցությունը դյուրացնելու նպատակով:
- Շարունակել պետական կառավարման բարեփոխման գործընթացը՝ ավելացնելով ձեռնարկվող միջոցառումները կոռուպցիան կանխելու և դրա դեմ պայքարելու նպատակով:
- Նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությանը և հզորացնել տեղական ինքնակառավարման խորհուրդների կարողությունները, ապահովել տեղական իշխանությունների կարողությունները և ավելացնել տեղական իշխանությունների կողմից տնօրինվող ռեսուրսները: Առավել արդյունավետ դարձնել տեղական ինքնակառավարման հարկային մեխանիզմը և վերանայել ֆինանսական հավասարեցման սկզբունքը:

- Խրախուսել միջնաժամկետ աճը՝ բարելավելով գործարար մթնոլորտը և գրավիչ դարձնելով ներդրումային դաշտը, ուժեղացնել երկրի արտաքին դիրքը, շարունակել ավելորդ վարչարարության բացառման ճանապարհով մոբիլիզացնել հարկային եկամուտների աճը:
- Դիվերսիֆիկացնել առավել բարձր օգտակարություն և նշանակություն ունեցող հայկական ապրանքների արտահանումը, հետագա կարգավորիչ քայլեր ձեռնարկել միջազգային առևտրային օրենքներին և չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:
- Ավելացնել ջանքերը միջազգային կոնվենցիաների իրականացման ուղղությամբ, որոնք առնչվում են ԵՄ Արտոնությունների ընդհանուր համակարգին (ԱԸՀ): Միջոցառումներ ձեռնարկել Մեծամորի ատոմային կայանի շուտափույթ փակման ուղղությամբ և ընդունել շահագործումից դուրս բերելու մանրամասն ծրագիրը՝ հաշվի առնելով սթրեսային փորձարկումների արդյունքները՝ միևնույն ժամանակ, բարձրացնելով ատոմային կայանի անվտանգության չափանիշները:
- Նպաստել դարաբաղյան հակամարտության համապարփակ խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին՝ հավատարիմ մնալով Մինսկի խմբում ստանձնած պարտավորություններին: Խուսափել իրավիճակը լարող և խաղաղ գործընթացը խաթարող գործողություններից և հայտարարություններից: Ձևավորել հակամարտության խաղաղ կարգավորմանը նպաստող միջավայր և աջակցել խաղաղաստեղծ գործողություններին: Ապահովել հակամարտության կարգավորմանն աջակցող ԵՄ ներկայացուցիչների անարգել մուտքը Լեռնային Ղարաբաղ և շրջակա տարածաշրջաններ:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ և ԲԱՐԵՓՈՒՈՒՄ

Խորը և կայուն ժողովրդավարություն

Կառավարությունը դեռևս չի ձեռնարկել Ընտրական օրենսգրքի բարեփոխումների գործընթացն ընտրություններից առնվազն մեկ տարի առաջ, ինչպես դա առաջարկվել էր ԵԱՀԿ/ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից: Հաջորդ խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան 2017թ. փետրվարին: Կանայք դեռևս բավարար չափով ներկայացված չեն քաղաքական պաշտոններում: ԵՄ-ը շարունակում է աջակցել կանանց մասնակցությանը տեղական որոշումներ կայացնելու գործընթացներում:

2014թ. ապրիլին **Սահմանադրական բարեփոխումների** հարցերով հանձնաժողովը հրապարակել է համապարփակ սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հայեցակարգը, որը նաև ներառում է անցում դեպի խորհրդարանական կառավարման համակարգ, ընտրական համակարգում այլ փոփոխություններ, իշխանություն օղակների միջև ավելի արդյունավետ հավասարակշռություն և ավելի առարկայական հարգանք

մարդու իրավունքների հանդեպ: 2014թ. հոկտեմբերին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը եզրակացություն է ընդունել տվյալ փաստաթղթի վերաբերյալ և առաջարկել նպատակներ՝ ձեռնպահ մնալով կառավարման համակարգի ընտրության վերաբերյալ առաջարկություններից:

Կառավարությունը հարգանքով է վերաբերվել **միավորումներ կազմելու ազատությանը**: Սեպտեմբերին այն ընդունել է “Քաղաքական հասարակության կազմակերպությունների ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումների վերաբերյալ հայեցակարգը”: Դրանում նշվել է, որ Արդարադատության նախարարությունը պետք է ներկայացնի հասարակական կազմակերպությունների մասին օրենքի նոր նախագիծը: Համաձայն օրենքի նախագծի՝ թույլատրվում է հասարակական կազմակերպությունների ճկուն կանոնակարգումը և դրանց կանոնակարգերի դերի բարձրացումը: Հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունությունը ներկայացված է գործիքների ավելացման միջոցով, որոնք գոյություն չունեն ներկայիս օրենսդրության մեջ: Մասնավորապես, խոսքը գնում է հասարակական կազմակերպությունների ուղղակի բիզնես գործունեության, առավել թափանցիկ պետական ֆինանսավորման և նոր գործիքների համար հնարավորությունների մասին: Օրինակ՝ նվիրատվություն: Դրանք առավել կայուն, անկախ, ինքնակարգավորված, զարգացած և ինստիտուցիոնալ առումով ուժեղ են դարձնում հասարակական կազմակերպությունները: Օրենքը մշակել է քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և Արդարադատության նախարարության աշխատակազմից կազմված աշխատանքային խումբը: Երկու փաստաթղթերը լայնորեն քննարկվել են քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպությունների հետ հասարակական միջոցառումների, կլոր սեղանների ընթացքում և աշխատանքային խմբերում:

Հավաքների ազատության մասին ներկայիս օրենքը համահունչ է ԵՄ-ի և այլ միջազգային չափանիշներին: Սակայն, դրա իրականացումը ձախողվեց գրանցված 17 միջադեպի և ձեռքակալված 72 ակտիվիստների պատճառով: Տարբեր տեխնիկական պատճառներով իշխանությունների կողմից արգելված հավաքների թիվը նվազել է: Մի շարք դեպքերում ոստիկանությունը, համաձայն որոշ տեղեկությունների, ուժ է կիրառել և սահմանափակել հավաքները՝ նշելով, որ դրանք “արտոնված չեն”:

Ազատ արտահայտման իրավունքի և մամուլի հանդեպ որևէ էական զարգացում չի գրանցվել: Չնայած կառավարության և պետական ծառայողների նկատմամբ քննադատությունները հիմնականում հանդուրժվում էին և համացանցի օգտագործման վերաբերյալ սահմանափակումներ չէին գրանցվել, մի շարք հարցեր դեռևս արգելված են: Մարդու իրավունքների պաշտպանները, լրագրողները, փոքրամասնության կարծիքը կիսող անձինք, այնպիսի հարցերում, ինչպիսին է գենդերային հավասարությունը կամ դարաբաղյան հակամարտության կարգավորումը, շարունակվում են ենթարկվել ոտնձգությունների, սպառնալիքների և բռնության: Մամուլի անկախության մակարդակը

դեռևս անբավարար է, նաև չկա առաջընթաց էլեկտրոնային ՁԼՄ-ներում բազմակարծություն ապահովելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է **դատական համակարգի** անկախությանը, ապա այս ոլորտում շարունակվում է 2012-2016թթ. Դատական բարեփոխումների ռազմավարության իրականացումը: Դատական օրենսգրքում օրենսդրական փոփոխություններն ինքնակառավարման կառուցվածքների սահմանման միջոցով ուժեղացրել են դատավորների անկախությունը, բարելավվել են դատավորների գնահատման և առաջխաղացման չափորոշիչներն ու ավելի թափանցիկ է դարձրել դատավորների նշանակման գործընթացը: Սակայն, փոփոխությունները պաշտոնապես հաստատել են Նախագահի դերը դատավորների վերջնական նշանակման գործընթացում: Բարձր է մնում համակարգի և դրա ազնվության հանդեպ հասարակական անվստահությունը: Ինչ վերաբերում է **անպատժելիությանը**, ապա 2008թ. մարտին կայացած նախագահական ընտրություններին հաջորդած բախումների ընթացքում տեղի ունեցած մահվան դեպքերի քննության հարցում շոշափելի զարգացումներ չեն գրանցվել: ԵՄ-ը շարունակում է աջակցել դատական համակարգի անկախության և բարձր մակարդակի հզորացմանը, այդ թվում բյուջետային հատկացումների տեսքով:

Առաջխաղացում կա անվճար իրավական օգնության իրավունքի հարցում: Հասարակական պաշտպանների թիվն ավելացել է, իսկ օրենսդրական փոփոխությունների միջոցով անվճար իրավական օգնության իրավունք ունեցող բնակչության խմբերը շատացել են: Սակայն, անվճար իրավական օգնության մասին տեղեկատվության բացակայությունը շարունակում է թուլացնել արդարադատության հասանելիությունը:

Էական առաջընթաց չի գրանցվել նաև **արդար դատաքննության** իրավունքի նկատմամբ: Դատավորներին, ըստ իրենց մասնագիտացման, պատահական գործեր հանձնարարելու վերաբերյալ չափանիշների սահմանման մասին քննարկումները կոնկրետ արդյունք չեն տվել: Դատարանները դեռևս կախված են գլխավոր դատախազությունից, և դրանց անկախությունն ու անաչառությունը լիարժեք երաշխավորված չէ: Վճռաբեկ դատարանը շարունակում է ազդել այլ դատական մարմինների վրա: Քրեական դատավարության նոր օրենսգրքի հիմքում ընկած է անմեղության կանխավարկածը և պաշտպանության ու մեղադրող կողմերի միջև իրավահավասարությունը: Հայաստանը նույնպես սկսել է մշակել Քրեական նոր օրենսգիրքը: ՀՀ իշխանությունները պատրաստակամություն են հայտնել խոշտանգումների և կոշտ վերաբերմունքի հարցերում այն ամբողջովին համապատասխանեցնել Եվրոպայի խորհրդի չափանիշներին: Սակայն, 2014թ-ին մինչդատական հետաքննությունների ընթացքում խոշտանգումների և կոշտ վերաբերմունքի դեպքերի մասին արված հայտարարություններն անտեսվել են կամ պատշաճ կերպով չեն հետաքննվել: Մինչդատական կալանքի սահմանման կամ երկարացման վերաբերյալ որոշումները դատարանների կողմից պատշաճ կերպով չեն հիմնավորվել:

Ապրիլին Հայաստանը հաստատել է կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը, որն ուղղված է կրթության, պետական եկամուտների, ոստիկանության և առողջապահության ոլորտներում տվյալ երևույթի վերացմանը: Արդյունքում մշակվել է ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագիծ, որը հոկտեմբերին ներկայացվել է տեղի և միջազգային գործընկերներին: Նախագծով նախատեսված է կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Դեռևս կարիք կա հզորացնելու Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մանդատն ու դրա գործառույթները: ՄԻԳՄԱ (Կառավարման բարելավման աջակցություն) միջազգային կազմակերպությունը շարունակում է համապատասխան քաղաքականության աջակցություն տրամադրել: 2014թ. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը չստեղծվեց:

2013թ-ին այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքում փոփոխություններն ընդունելուց հետո անվտանգության և օրենքի հարկադիր կատարման ոլորտներում դրական զարգացումներ են գրանցվել: Հոկտեմբեր ամսվա դրությամբ, զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց կողմից տեղափոխման համար ներկայացված դիմումները բավարարվել են: 74 դիմորդ իրենց ծառայությունն անցնում են ծերանոցներում, հոգեբուժական հաստատություններում և մանկատներում, կամ կանաչապատման/բարեկարգման գործակալություններում:

Հայաստանը շարունակում է հարգել ԵԱՀԿ Վարքի կանոնակարգի միջազգային հանձնառությունները զինված ուժերի նկատմամբ **ժողովրդավարական վերահսկման և անվտանգության հարցում**: Սակայն, մտահոգիչ են զինված ուժերում ոչ մարտական պայմաններում արձանագրված կասկածելի մահվան, ինչպես նաև զինակոչիկների նկատմամբ վատ վերաբերմունքի և ոչկանոնադրական հարաբերությունների դեպքերը: Մարդու իրավունքների պաշտպանն իր տեղակալին հանձնառել է զբաղվել զինծառայողների իրավունքների հարցերով:

Մարդու այլ իրավունքներ և հիմնարար ազատություններ

Մարդու իրավունքների միջազգային գործիքների և Հայաստանի մարդու իրավունքների պարտականությունների մասին իրազեկումը ցածր է մնում ազգային կառույցների, այդ թվում դատական և օրենքի հարկադիր կիրառման մարմինների շրջանում: Կառավարությունը պատրաստել է Համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ երկրորդ ազգային զեկույցը (զեկույցի վերանայումը կայանալու է 2015թ-ի սկզբին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում): Հայաստանը ստորագրել է մարդու իրավունքների ավելի քան 50 միջազգային կոնվենցիա, այդ թվում բոլոր հիմնարար կոնվենցիաները: Սակայն, այն դեռ չի վավերացրել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Կառավարությունն ընդունել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրությունն՝ ուղղված

մահապատժի վերացմանը, բայց դեռևս չի վավերացրել այն: Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացումը նույնպես անավարտ է:

2014թ-ի հունիսի դրությամբ **Մարդու իրավունքների եվրոպական դատարանում** քննվել է Հայաստանին առնչվող շուրջ 1022 հայց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացրած ընդհանուր առմամբ 47 խախտման մասին դատավճիռներից 42-ի կատարումն ավարտված չէ: Արդարադատության նախարարությունը ստեղծել է առանձին վարչություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դեպքերի ուսումնասիրության նպատակով:

Մարտին Կառավարությունը հաստատել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության հիման վրա մշակված **Մարդու իրավունքների գործողությունների ազգային ծրագիրը**: Դա պետական հաստատությունների համաձայնեցված գործողությունների ճանապարհային քարտեզն է Հայաստանի միջազգային պարտավորությունները կատարելու համար և կարող է դիտվել որպես քայլ առաջ: Կառավարության ներկայացուցիչների խոսքերով, ծրագիրը պետք է վերանայվի և կանոնավոր կերպով փոփոխվի: Թեև ռազմավարության և գործողությունների ծրագրի ընդունումը կարևոր քայլ է, այդուհանդերձ այն չի ներառում որոշ առաջնային ոլորտներ, այդ թվում Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, ընտրական իրավունքները և կանանց իրավունքների հանդեպ ավելի մեծ հարգանքի ապահովումը: ԵՄ-ն Հայաստանի հետ շարունակում է երկխոսությունը մարդու իրավունքների հարցերի շուրջ: ԵՄ նոր ծրագրի միջոցով կավելանա մարդու իրավունքների ոլորտում աջակցությունը, մասնավորապես՝ ընտրությունների, խոշտանգումների կանխարգելման, գենդերային հավասարության և երեխաների պաշտպանության հարցերում: Կառավարությունը հաստատել է, որ այն կընդգրկի ԵՄ ծրագրի պայմանները Հայաստանի Մարդու իրավունքների գործողությունների ծրագրում:

ՀՀ օրենսդրությամբ արգելվում են **խոշտանգումները**, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը: Էական զարգացումներ չեն գրանցվել խոշտանգումների քրեականացման վերաբերյալ ազգային օրենսդրության Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 1-ին հոդվածին մոտարկման առումով: Այն նաև ներկայացված չէ Մարդու իրավունքների գործողությունների ծրագրում: Խոշտանգումների ներկայիս սահմանումը չի ընդգրկում պետական ծառայողների կողմից կատարված հանցագործությունները:

Ոստիկանական կալանքում գտնվողների նկատմամբ **վատ վերաբերմունքի** դեպքերի վերաբերյալ զգալի արդյունքներ ևս չեն գրանցվել: Մտահոգություններ են առաջացնում բռնի ուժով ստացված խոստովանությունների վերբերյալ դատական քննությունների ընթացքը և մեղադրյալների հայտարարությունները հետաքննելու ձախողումներն առ այն, որ խոստովանությունները ստացվել են խոշտանգումների կիրառման միջոցով: Մոնիտորինգ անցկացնող խմբերը հաստատել են, որ վատ վերաբերմունքը և ոստիկանության կողմից

բռնությունները շարունակում են տեղ գտնել կալանավորման ընթացքում և պատշաճ կերպով չեն ներկայացվում դատարաններում:

Արմավիրի քրեակատարողական հաստատության առաջին շինության բացման արդյունքում սահմանափակ առաջընթաց է գրանցվել քրեակատարողական համակարգի բարեփոխման ոլորտում: Նոր շենքը կոչված է նվազեցնելու գերբնակեցումը քրեակատարողական հաստատություններում: Քրեակատարողական հաստատություններում անմարդկային վերաբերմունքի դեպքերը դեռևս մտահոգություն են առաջացնում: Կալանավորման պայմանների բարելավումը և քրեակատարողական հաստատությունների գերբնակեցման նվազեցումը ողջունելի առաջխաղացում կլինի դեպի ԵՄ և միջազգային չափանիշներին համապատասխանեցում: Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանորեն թույլատրելի է, սակայն, գործնականում դատավորները դեռևս չեն կարողանում այլընտրանք առաջարկել քրեակատարողական հաստատությանը: Քրեակատարողական բարեփոխումների գործողությունների ծրագիրը մշակվել է Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովի կողմից՝ ըստ ներկայացված առաջարկությունների: Փորձաշրջանի ծառայության ներդրման մասին օրենքի նախագիծը քննարկվել է գործընկերների և քաղաքացիական հասարակության հետ, սակայն առայժմ չի ընդունվել: ԵՄ-ի աջակցությամբ շարունակվում է Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովի չափանիշներին քրեակատարողական հաստատությունների պայմանների համապատասխանեցման գործընթացը:

Չնայած որոշ առաջընթաց է գրանցվել կրոնական փոքրամասնությունների իրավունքների ուղղությամբ (մասնավորապես, Եհովայի վկաների համար զինվորական ծառայության այլընտրանքների հարցում), հասարակությունը դեռևս չի ընդունում կրոնական փոքրամասնություններին: **Խղճի և կրոնի ազատության** մասին օրենքը դեռ չի ընդունվել: Աշխատանքի վայրերում և մամուլում շարունակվում է խտրականությունը կրոնական փոքրամասնությունների խմբերի նկատմամբ:

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքը դեռ լիարժեք չի իրականացվում: Անհավասարության մասին բողոքելու միջոցներ չկան: Մտահազություն է առաջացնում կանանց և տղամարդկանց դերի վերաբերյալ խորը արմատացած նահապետական վերաբերմունքը և կարծրատիպերը, ինչը գուցե ավելի է կանանց դեմ բռնության կայուն բարձր մակարդակով: Ընտանեկան բռնության մասին օրենքը դեռ չի ընդունվել: Նախատեսված է, որ Քրեական և Վարչական օրենսգրքերի բարեփոխումները պետք է ավարտվեն մինչև 2016թ-ի վերջը և պարզ չէ, թե ինչպես է կիրառվելու խղճի ազատության վերաբերյալ դրույթը: Չնայած ավելացող մարտահրավերներին, **կանանց իրավունքների** պաշտպանների տեսանելիությունն ավելացել է շնորհիվ համացանցի և սոցիալական մեդիայի: Այդ ամենի կողմնակի ազդեցությունը կանանց իրավունքների կազմակերպությունների դեմ սպառնալիքների և թշնամական արտահայտությունների աճն է, որոնք պատշաճ կերպով չեն հետաքննվում ոստիկանության կողմից:

Գենդերային ընտրության պրակտիկան դեռ առկա է: Սեռի հիման վրա ընտրության արգելման մասին օրենքը մշակվել է և ներկայացվել է կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը:

Աջակցություն է ցուցաբերվել, որպեսզի երեխաները դառնան երեխաների խնամքի համակարգի բարեփոխումների անբաժանելի մասը, և նրանց կտրամադրվեն բնակության տարածքից դուրս ծառայություններ: Երկու հաստատություններ փակվել են և ստեղծվել են այլընտրանքային ծառայություններ: Երեխաների խնամքի հաստատությունների մոնիտորինգը բռնության և վատ վերաբերմունքի նոր դեպքեր է հայտնաբերել:

Երեխաները նույնպես մնում են հասարակության ամենաաղքատ խումբը (36.2%): Աղքատության բարձր ռիսկ է գրանցվում հաշմանդամ երեխաների, մանկահասակ երեխաների, բազմանդամ ընտանիքների և միայնակ մայրերի ընտանիքների շրջանում: Չկա օրենքով պարտադրված խնդիրների հստակ բաշխում սոցիալական պաշտպանության և երեխաների խնամքի ծառայությունների միջև:

Մարդու իրավունքների գործողությունների ծրագիրը ճանաչում է **խոցելի խմբերի իրավունքների** պաշտպանության հզորացման անհրաժեշտությունը: Այդ ամենը հաշվի առնելով՝ Կառավարությունը Խորհրդարանին է ներկայացրել սոցիալական աջակցության մասին օրենքի նախագիծը, որն ուղղված է մի շարք խոցելի խմբերին տարբեր եղանակներով աջակցության տրամադրմանը:

Հունվարին Կառավարությունը հաստատել է Հաշմանդամություն սահմանելու մասին հայեցակարգը, որը հիմնված է բազմակողմ գնահատման վրա Առողջապահության համաշխարհային կազմակերպության դասակարգումների հետ համահունչ:

Գործադուլի իրավունքի, ինչպես նաև որոշ խմբերի համար (օրինակ՝ հարկադիր ծառայողների) արհմիություններին միանալու որոշ սահմանափակումներ դեռ գործում են:

Հայաստանը դեռևս չունի **խտրականության** դեմ համապարփակ իրավական շրջանակ: Մարդու իրավունքների գործողությունների ծրագրում միայն առաջակցվում է գնահատել ՀՀ համապատասխան օրենսդրության համատեղելիությունը միջազգային օրենսդրության հետ և կշռադատել խտրականության դեմ օրենսդրության ընդունման չափանիշները: Ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ, թեև խտրականությունը և անհանդուրժողականությունը շարունակվում են լինել հիմնական խնդիրները: Համատարած խտրականության արտահայտումներ են դիտվում նաև հաշմանդամների նկատմամբ իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առումով: Հաշմանդամները նույնպես սոցիալապես մեկուսացված են բոլոր ոլորտներում:

Կառավարությունը չի կիրառել **սեփականության իրավունքների** վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի որոշումները և Հայաստանում գույքը որպես պետական գերակա շահ պարտադրվում է օտարման:

Հունվարին, Եվրոպայի խորհրդի փորձագետների հանձնաժողովը հաստատել է, որ Հայաստանը մշակել է **փոքրամասնության** լեզուների պաշտպանության և խրախուսման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը: Դրա իրականացումը դեռ չի ավարտվել մի շարք ոլորտներում: Փոքրամասնության լեզուները քիչ են օգտագործվել վարչական իշխանությունների հետ աշխատանքների ընթացքում (այդ թվում՝ այն ոլորտներում, որտեղ ներկա էին փոքրամասնությունները):

Կառավարմանն առնչվող այլ խնդիրներ

Պետական կառավարման բարեփոխումները շարունակաբար դանդաղում են: Խրախուսվել է, որպեսզի Կառավարությունը շարունակի իրականացնել քաղաքացիական ծառայության բարեփոխումները ՄԻԳՄԱ-ի կողմից մշակված նախագծի հիման վրա, ինչպես նաև քաղծառայողների համար վերապատրաստման համակարգի բարելավման գործընթացը:

Շարունակվել են տարածաշրջանային և **տեղական ինքնակառավարման մարմինների** բարելավումները: Մարտին Եվրոպայի խորհրդի տեղական ինքնակառավարման մարմինների պալատը հայտարարել է, որ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող տեղական ծառայությունների մեծ մասն ունի ծառայությունների տրամադրման սահմանափակ կարողություն: Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ դեր են խաղում, քանի որ չունեն ամբողջական և բացառիկ իրավունքներ: ՀՀ իշխանությունները դեռ չեն սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և կարողություններ փոխանցելու եղանակները:

Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև կառուցողական երկխոսության անհրաժեշտություն կա: Միևնույն ժամանակ նշվում է, որ քաղաքացիական հասարակությունում բացակայում են քաղաքականության մոնիտորինգը և կառավարության հետ երկխոսություն վարելու բավարար կարողությունները: Ի պատասխան այս իրավիճակին՝ ԵՄ-ը շարունակում է կանոնավոր խորհրդատվություններ անցկացնել քաղաքացիական հասարակության հետ, և նոր ծրագիր է մեկնարկել սոցիալական ձեռներեցության միջոցով կարողությունների զարգացման և կայունության խթանման վերաբերյալ:

Արտաքին և անվտանգության քաղաքականության վերաբերյալ համագործակցություն, տարածաշրջանային և միջազգային խնդիրներ, հակամարտության կանխարգելում և ճգնաժամի կառավարում

Հայաստանը շարունակում է առանձին դեպքերով համահունչ լինել Ընդհանուր արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության (Common Foreign and Security Policy, CFSP) հայտարարություններին: Հայաստանը համաձայնեցրել է ստորագրելու համար 48 հայտարարություններից 15-ը (19-ը հայտարարություն 32-ից 2013թ-ին):

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, Մինսկի գործընթացում ձգձգվող բանակցությունների համատեքստում, Սոչիում, Ուելսում և Փարիզում անցկացրած հանդիպումները վերականգնել են կողմերի միջև խաղաղ կարգավորմանն ուղղված շփումներն ու փոխանակումներն ամենաբարձր մակարդակով: 2014 թ-ի ամառվա ընթացքում շփման գծում և միջպետական սահմանին բռնությունների ալիքը, ինչպես նաև նոյեմբերի 12-ին ուղղաթիռի խոցումն աննախադեպ էին 1994 թ-ին հրադադարի մասին համաձայնագրի ստորագրումից հետո: ԵԱՀԿ-ի կողմից զեկուցված երկու կողմերի համար դեպքերի թիվը 2014 թ-ին կտրուկ աճել է՝ հասնելով սպանված 57 զինծառայողի և 1 քաղաքացու, ի տարբերություն 2013-ի՝ 14 սպանված զինծառայող, 32 վիրավոր զինծառայող և 5 քաղաքացի: Հակամարտության հոետորաբանությունը, սպառազինության շարունակական մրցավազքը, ինչպես նաև մարդասիրական խնդիրներն իրենց ազդեցությունն են թողել հակամարտության կարգավորման գործընթացի վրա: Առաջընթացի բացակայությունը շարունակում է լուրջ ազդեցություն թողնել հակամարտության արդյունքում տարաբնակեցված բնակչության վրա:

ԵՄ-ը կոչ է արել հանձնաժողովներին զերծ մնալ գործողություններից և հայտարարություններից, որոնք կարող են թեժացնել իրավիճակը և բացասական ազդեցություն ունենալ խաղաղ գործընթացի վրա, խթանել հակամարտության կարգավորմանը նպաստող մթնոլորտը՝ խրախուսելով և աջակցելով խաղաղաստեղծ գործողություններին: ԵՄ-ը շարունակում է ամբողջական աջակցություն ցուցաբերել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներին: Բարձր ներկայացուցիչը/նախագահի տեղակալը աջակցում է շարունակական ջանքերին խաղաղության ուղղությամբ: Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ նոր հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Սալբերը կանոնավոր այցելություններ է կատարում տարածաշրջան՝ մասնակցելու բարձր մակարդակով հանդիպումներին և կապ է պահպանում համապատասխան գործընկերների հետ: ԵՄ-ը շարունակում է ֆինանսապես աջակցել «Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար եվրոպական գործընկերություն» ծրագրին՝ համախմբելով հակամարտության շահագրգիռ կողմերին խաղաղաստեղծ գործողություններում: ԵՄ-ը շարունակում է կոչ անել ապահովել ԵՄ ներկայացուցիչների անխափան մուտքը Լեռնային Ղարաբաղ և շրջակա տարածքներ, որպես հակամարտության կարգավորման կարևոր միջոց և Մինսկի խմբի ջանքերի փոխլրացում:

ԵՄ-ը պահպանում է իր աջակցությունը այն գործողություններին, որոնք խրախուսում են վստահությունը և տարբեր երկրների առանձին անձանց միջև շփումը, խթանում են մշակութային և կրթական գործողությունները և դյուրացնում

են Հայաստանում և Ադրբեջանում հավասարակշռված տեղեկատվության տարածումը:

3. Տնտեսական և սոցիալական բարեփոխումներ ու զարգացում

Հայաստանի իշխանությունները 2014 թ-ին լուրջ մակրոտնտեսական քաղաքականություններ են իրականացրել: Սակայն, Ռուսաստանի Դաշնությունում էական տնտեսական անկումը և ԵՄ-ում համեմատաբար ցածր պահանջարկի աճն ազդել են տնտեսության վրա: ՀՆԱ-ն ավելացել է 2.6%-ով¹ 2013 թ-ի 3.5%-ի համեմատ: 2013 թ-ին միջին սղաճը նվազել է 5.8%-ից մինչև 2.2% 2014 թ-ին, որպես Ռուսաստանից գազի ցածր գների արդյունք: Գնահատվել է, որ 2014 թ-ին ֆինանսական պակասուրդը ավելացել է ՀՆԱ-ի 2.3%-ի 2013թ-ի ՀՆԱ-ի 1% հետ համեմատած: Պետական պարտքը (որի 85% արտարժույթով է) գնահատվել է ՀՆԱ-ի 49.7% 2014թ-ի վերջում, ինչի վրա ազդել է 2014 թ-ի վերջի ՀՀ դրամի կտրում արժեզրկումը: Ընթացիկ հաշվի կոնսոլիդացման աշխատանքները առաջխաղացում չեն ունեցել 2014 թ-ին: Ընթացիկ հաշիվը գրանցել է ՀՆԱ-ի 8.1% պակասուրդ 2014 թ-ին (2013թ-ի 8%-ից և 2012թ-ի 12.1%-ից) որպես արտահանումների թվի և 2014թ-ի երկրորդ կեսի փոխանցումների թվի նվազման արդյունք (մասնավորապես Ռուսաստան):

Գործազրկության մակարդակը գնահատվում է մոտ 17.2%, երիտասարդների շրջանում, գործազրկությունը կազմում է 24%: Երիտասարդների հատուկ մտահոգություններն են աշխատանքային շուկա առաջին մուտքը և բարձրագույն կրթության բացակայությունը: Կանանց մոտ 50%-ը տնտեսապես ակտիվ չեն: Ոչ պաշտոնական գործազրկության մակարդակը դեռևս շատ բարձր է: Համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, բնակչության ավելի քան 30%-ն ապրում է **աղքատության** մեջ:

Հայաստանը շարունակում է բարեփոխումներ իրականանել սոցիալական ծառայությունների ինտեգրման ուղղությամբ: Բացվել են 19 ինտեգրված սոցիալական ծառայության կենտրոններ (պլանավորված 57-ից): Կենտրոնները գործում են «մեկ պատուհան» սկզբունքով: Առաջնահերթությունների շարքում են սոցիալական ավելի սերտ համախմբվածությունը, ավելի լավ սոցիալական ծառայությունները և հետևողական իրականացումն ու մոնիտորինգը: Հայաստանը նաև օրենսդրություն է մշակել սոցիալական ծառայությունների համակարգման և սոցիալական աջակցության համար: Կենսաթոշակային բարեփոխումները հետաձգվել են Սահմանադրական դատարանի կողմից ապրիլին կայացրած որոշումից հետո:

¹ Աղբյուրների և մանրամասն ցուցանիշների համար, տես զեկույցներին կից Վիճակագրական հավելվածներ: Առանց աղբյուրների թվերը կանխատեսվել են Հանձնաժողովի ծառայությունների կողմից:

Հաստատվել է Հայաստանի զարգացման ռազմավարությունը (2014-25թթ), որը փոխարինել է **կայուն զարգացման նախկին ծրագրին**: Հիմնական առաջնություններն են զբաղվածությունը, մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը և պետական կառավարման և վարչարարության ինստիտուցիոնալ արդիականացումը: Ռազմավարությունում սահմանվել են տնտեսության վրա ազդող խաչաձև հատվող խնդիրները, ընդգծվել է կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը և գործարար մթնոլորտի բարելավումը:

Գյուղատնտեսության և գյուղական զարգացման ոլորտում իրականացվել է կայուն գյուղատնտեսական զարգացման ռազմավարության միջնաժամկետ վերանայումը՝ քաղաքացիական զարգացման զգալի ներդրումով:

Մարտ ամսին Կառավարությունը որոշում է կայացրել, որ 2015թ-ի հունվարի դրությամբ Հայկական սոցիալական ներդրումային հիմնադրամը կազմելու է Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի ինստիտուցիոնալ մասը: Տարածաշրջանային զարգացման համապարփակ ռազմավարությունը և Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի մոդելը մշակվել են ԵՄ-ի աջակցությամբ:

4. ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ

2014 թ. ԵՄ-Հայաստան երկկողմ **առևտրի** ծավալը կազմել է 992 միլիոն եվրո (ԵՄ ներմուծումը՝ 276 միլիոն եվրո, ԵՄ արտահանումը՝ 716 միլիոն եվրո, ԵՄ-ի հետ առևտրի հաշվեկշիռը՝ 440 միլիոն եվրո): ԵՄ-ն մնացել է Հայաստանի հիմնական առևտրային գործընկերը:

Համաձայն բարեփոխված ԵՄ Արտոնությունների ընդհանուր համակարգի (ԱԸՀ/GSP)՝ Հայաստանն իրավունք է ստացել օգտվել կայուն զարգացման և լավ կառավարման համար հատուկ խրախուսական դրույթներից՝ GSP+/ ԸՆՀ +-ից՝ առաջարկելով ավելի շահեկան արտոնյալ մուտք դեպի ԵՄ շուկա:

Մայիսին Ազգային ժողովը փոփոխություն է կատարել գործող **Մաքսային** օրենսգրքում՝ Եվրամիության ընթացիկ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի առաջարկություններին համահունչ: Պետական եկամուտների կոմիտեն միացվել է Ֆինանսների նախարարությանը: Հաստատվել են ապրանքներ տեղափոխող անձանց ռիսկերի գնահատման կանոնները և մաքսային հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ կարգը: Հայաստանը միացել է մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման վերաբերյալ Կիոտոյի վերանայված կոնվենցիային: Չնայած ԵՏՄ-ի ստեղծմամբ ակնկալվում էր, որ այն կունենա էական ազդեցություն **տեխնիկական կանոնակարգերի և ապրանքների ազատ տեղաշարժի**

վրա, սակայն մինչ օրս տեխնիկական խոչընդոտների որևէ խոշոր փոփոխություն չի արձանագրվել:

2014 թ. փետրվարին հաստատվել է «Բույսերի կարգավորվող վնասակար օրգանիզմների անվանացանկը վարելու ուղեցույցը»: ՀՀ կառավարությունը 2015 թ. համար նաև մշակել է ձկան, մեղրի և մսի մեջ մնացորդային նյութերի հսկողության ծրագրեր: Եվրամիության ԹՎինինգ ծրագրի շրջանակներում տրամադրվել է աջակցություն օրենսդրության մշակման, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և **սանիտարական ու բուսասանիտարական խնդիրների** և սննդամթերքի անվտանգության մասին հասարակության իրազեկությունը բարձրացնելու ոլորտներում:

Հայաստանի **արտաքին ուղղակի ներդրումները** նվազել են երկրորդ տարին անընդմեջ, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ տարեցտարի պակասելով ավելի քան 35% -ով: ԵՄ-ն շարունակել է մնալ արտադրական ոլորտում արտաքին ուղղակի ներդրումների հիմնական աղբյուրը:

Ինչ վերաբերում է **ֆինանսական ծառայություններին**, Կենտրոնական բանկը հաստատել է բանկերի կապիտալի ձևավորման և կառուցվածքի վերաբերյալ փոփոխությունները՝ Բազել III-ի պահանջներին համահունչ:

Ուժի մեջ են մտել **հարկային օրենքների՝** մարդկանց իրենց եկամուտը հայտարարագրելու հարցում խրախուսելու վերաբերյալ փոփոխությունները: Հոկտեմբերին ուժի մեջ է մտել «Շրջանառության հարկի մասին» նոր օրենքը, որով տոկոսադրույքը նվազեցվել է 3.5% -ից մինչև 1%:

2014 թ. փետրվարին Հայաստանի **վիճակագրական** համակարգի փորձագիտական գնահատումը հաստատել է, որ Ազգային վիճակագրական ծառայությունն օժտված է բարձր մակարդակի մասնագիտական անկախությամբ և պրոֆեսիոնալիզմով: Հոկտեմբերին անցկացվել է Հայաստանում առաջին գյուղատնտեսական ցուցակագրումը, որը կապահովի էական տեղեկատվություն ապագա պլանավորման և քաղաքականության մշակման համար:

Մրցակցության մասին օրենքի փոփոխությունները ներկայացվել են խորհրդարան, սակայն չեն ընդունվել: Ոչ էլ որևէ առաջընթաց է արձանագրվել պետական օժանդակության վերահսկման վերաբերյալ օրենսդրություն ընդունելու ոլորտում: Ապրիլին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակավ քննադատել է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ մենաշնորհները հետաքննելու հարցում թերանալու համար:

Ավարտվել է **մտավոր սեփականության իրավունքների (ՄՄԻ)** մասին իրազեկությունը բարձրացնելուն և դրանց կիրառման հարցում աջակցելուն ուղղված Եվրամիության ԹՎինինգ ծրագրի, որի արդյունքում մշակվել է ՄՄԻ կիրառման մասին օրենքի նախագիծ

(մշակված Մտավոր սեփականության իրավունքների կիրառման մասին ԵՄ դիրեկտիվի հիման վրա): Օրենքի ընդունումը դեռ ընթացքի մեջ է:

Եղել են էական բարելավումներ **պետական գնումների** ընթացակարգերում, այդ թվում՝ ոչ մրցակցային պարզեցված ընթացակարգերի օգտագործման զգալի կրճատում: Շրջանակային համաձայնագրերով գնումների թիվն աճել է՝ հասնելով 50%-ի , իսկ բաց մրցույթների թիվը՝ 22%-ի: Մեկնարկել է էլեկտրոնային գնումների համակարգը: Ֆինանսների նախարարությունը մեկնարկել է կարողությունների զարգացման գործընթաց ձեռներեցների համար՝ կապված ԱՀԿ-ի Պետական գնումների համաձայնագրից բխող գնումների ընթացակարգերի և թարմեցված պահանջների հետ: Գնումների կողավորման համակարգն սկսել է գործել դեռևս տարվա սկզբին, և կատարելագործվել է մշտադիտարկման համակարգը: Գնումների աջակցման կենտրոնը նաև իրականացրել է ողջ պետական հատվածում գնումների գործունեության պատահական մշտադիտարկման մի ծրագիր:

Օգոստոսին սկսվել է **պետական ներքին ֆինանսական հսկողության** վերաբերյալ Եվրամիության Թվինինգ ծրագիրը՝ խթանելու հանրային ոլորտի կառավարման և կատարողականի բարեփոխումները:

ՀՀ կառավարությունը սկսել է մշակել նոր **ՓՄՁ** ռազմավարություն՝ Հայաստանում ՓՄՁ-ների զարգացմանն աջակցությունը մեծացնելու նպատակով: Ակնկալվում է, որ այն մասամբ հիմնված կլինի Եվրոպայի փոքր ձեռնարկությունների մասին ակտի (ՓՁԱ) մեջ ամրագրված 10 սկզբունքների վրա: Հայաստանը մասնակցել է «Աջակցություն ՓՄՁ մրցունակությանը Արևելյան գործընկեր երկրներում» ծրագրին, որի նպատակն է իրականացնել Արևելյալ գործընկեր երկրներում անցկացված՝ ՓՁԱ-ի կատարման առաջընթացի առաջին գնահատման արդյունքում արված առաջարկությունները: Հայաստանը նաև պաշտոնապես դիմել է մասնակցելու Ձեռնարկությունների և ՓՄՁ-ների մրցունակության ծրագրին:

Ուժի մեջ են մտել շուկայի վերահսկողության և ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին օրենքները՝ ուղղված **սպառողների պաշտպանությանը**:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանը հունվարին սկսել է թողարկել կենսաչափական անձնագրեր, այդ թվում՝ 18 տարեկանից ցածր անձանց համար, որոնց դեպքում կենսաչափական անձնագրերը պարտադիր չեն:

ԵՄ-Հայաստան մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման համաձայնագրերի իրականացումն սկսվել է սեպտեմբերին: Շարունակվել է ԵՄ-Հայաստան **Շարժունակության շուրջ գործընկերության** շրջանակում և 2012-16 թթ. ազգային գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: Մարտին Եվրամիության աջակցությամբ ստեղծվել է վերադարձող միգրանտների վերաինտեգրման ուղղորդման կենտրոն, և գործարկվել է առցանց տեղեկատվական մի կայք վերադարձող միգրանտների համար: Հուլիսին Հայաստանը հաստատել է միգրացիոն օրենսդրությունը միջազգային չափանիշներին (այդ թվում՝ «Եվրոպական միությունում և Միասնական տնտեսական տարածությունում ընդունված մոտեցումներին ու սկզբունքներին») մոտարկելու մասին 2014-16 թթ. գործողությունների ծրագիրը: Միգրացիոն պետական ծառայության կազմում ստեղծվել է ինտեգրման համար պատասխանատու նոր վարչություն՝ երկարաժամկետ միգրանտների համար քաղաքականություն մշակելու նպատակով:

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի փոփոխություններն ընթացքի մեջ են Ազգային ժողովում: Քրեական օրենսգրքի փոփոխություններն ուժի մեջ են մտել այս տարվա օգոստոսին՝ ՀՀ օրենսդրությունն ավելի համապատասխանեցնելով 1951 թ. Փախստականների մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածին՝ պաշտպանելով փախստականներին և ապաստան հայցողներին ապօրինի սահմանահատման համար պատժի ենթարկվելուց: «Քաղաքացիության մասին» օրենքի փոփոխությունները, որոնք նախատեսում են դրույթներ ապաքաղաքացիությունը կանխելու և կրճատելու մասին, ներկայացվել են Ազգային ժողովի քննարկմանը աշնանը:

ԵՄ աջակցությամբ ապաստանի հարցով իրավասու մարմիններն իրականացրել են որակի ապահովման մի շարք միջոցառումներ և շարունակել են վերապատրաստել, մարզել և մենթորություն անել ապաստանի ոլորտի աշխատակիցներին: Մինչև հունիսի վերջ 3177 ճանաչված փախստականներ են ժամանել Հայաստան Ադրբեջանից, Իրաքից, Սիրիայից, Իրանից, Լիբանանից, Վրաստանից և աֆրիկյան տարբեր երկրներից: Զեկույցները նշել են, որ Սիրիայի քաղաքացիական պատերազմի սկզբից ի վեր Սիրիայից Հայաստան է ժամանել մոտ 16000 մարդ՝ գրեթե բոլորը էթնիկ հայեր, որոնցից 12000-ն է մնացել Հայաստանում: Քիչ թվով տեղահանվածներ ժամանել են Ուկրաինայից և հյուսիսային Իրաքից:

Հայաստանը և Չեխիայի Հանրապետությունը համաձայնագիր են ստորագրել **կազմակերպված հանցավորության դեմ պայքարի** ոլորտում համագործակցության մասին: ԵՄ-ի աջակցությամբ տեղի են ունեցել ուսուցողական սեմինարներ իրավակիրառման, այդ թվում՝ հանցագործության վերլուծության, քննչական հմտությունների և կասկածյալների հարցաքննության թեմաներով: 2014 թ. առաջին կիսամյակում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների հետ կազմակերպվել են ուսումնական միջոցառումներ **փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման** վերաբերյալ:

Հայաստանն սկսել է իրականացնել թմրամոլության և **թմրամիջոցների ապօրինի** շրջանառության դեմ պայքարի 2014 թ. ծրագիրը: Քայլեր են ձեռնարկվել թմրամիջոցների և թմրամոլության Եվրոպական մոնիտորինգի կենտրոնի հետ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրն ստորագրելու ուղղությամբ:

Սեպտեմբերին Ազգային ժողովին է ներկայացվել **տվյալների պաշտպանության** մասին նոր օրինագիծը: Օրենքի նպատակն է, որ Հայաստանը կատարի Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի (կոնվենցիա 108) և դրա արձանագրության պահանջները: Օրենքը նախատեսում է ստեղծել տվյալների պաշտպանության անկախ մարմին:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԷՆԵՐԳԻԱ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (ՔԱԳՎ) որոշ գործառույթներ փոխանցվել են Էկոնոմիկայի նախարարությանը, ՔԱԳՎ-ն պահպանել է տեխնիկական, ապահովության և անվտանգության գործառույթները: Շարունակվել է հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարությունը, իսկ ԵՄ-ն համաձայնել է աջակցել միջանցքի հետագա հատվածների կառուցմանը Հարևանության ներդրումային գործիքի միջոցով:

Արևելյան Եվրոպայի հետ **էներգետիկ** արդյունավետության և շրջակա միջավայրի ոլորտում գործընկերության ծրագրին միանալուց հետո Հայաստանը քայլեր է ձեռնարկել ներդրումային պայմանագիրն ավարտին հասցնելու և ծրագրեր նախապատրաստելու ուղղությամբ: Հուլիսին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն ավելացրել է էլեկտրաէներգիայի սակագները միջինը 10%-ով: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը հայտարարել է արևային կայանների կառուցման նոր ներդրումային ծրագրի մասին: ԵՄ Հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ) կօժանդակի Վրաստանի և Հայաստանի միջև էլեկտրահաղորդման գծի կառուցմանը: Ինչ վերաբերում է միջուկային էներգիային, Մեծամորի ատոմակայանի պատեհաժամ փակումը և շահագործումից հանումը մնում է ԵՄ-ի և ԵՀՔ Գործողությունների ծրագրի առանցքային նպատակը:

2014 թ. իրականացվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող տարածաշրջանային **կլիմայի փոփոխության** ծրագիրը՝ աջակցելով կլիմայի փոփոխությանը հարմարվողականության և դրա մեղմման ազգային ռազմավարության մշակմանը: Իրականացվել է նաև մի փորձնական ծրագիր Գեղարքունիքի մարզում: Վեց քաղաքներ (Արթիկ, Դիլիջան, Գյումրի, Սպիտակ, Վայք և Երևան) միացել են ԵՄ Քաղաքապետերի դաշնագիր նախաձեռնությանը:

ԵՄ **շրջակա միջավայրի** ԹՎԻՆԻՆԳ ծրագիրն օգնել է Բնապահպանության նախարարությանը՝ նախապատրաստելու աղտոտման համալիր կանխարգելման և հսկման համակարգի ներդրման նոր քաղաքականություն ու օրենսդրություն: Հայաստանը նաև ընդունել է թափոնների կառավարման ազգային ռազմավարություն և օրենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) մասին, սակայն ՇՄԱԳ օրենքը հետագա բարելավման կարիք ունի:

Ինչ վերաբերում է **տեղեկատվական հասարակությանը**, Հայաստանն սահմանել է էլեկտրոնային հաղորդակցության ութ շուկաները ԵՄ-ի առաջարկություններին համահունչ, բջջային հեռախոսի համարի փոխանցման ծառայությունները դարձրել պարտադիր բջջային օպերատորների համար և արտոնագիր տվել չորրորդ բջջային օպերատորին: ՀՀ կառավարությունն ընդունել է էլեկտրոնային կառավարման ռազմավարական ծրագիրը և 2014-15 թթ. էլեկտրոնային կառավարման ճանապարհային քարտեզը: Եթե համարյա բոլոր քաղաքային բնակավայրերն արդեն միացած են ինտերնետին, ապա գյուղական վայրերում ջանքեր են գործադրվել ինտերնետի հասանելիությունը շարունակաբար ընդլայնելու համար: Էլեկտրոնային կառավարման գործիքները մեծապես բարելավվել են Եվրամիության աջակցությամբ՝ քաղաքացիական կացության ակտերի մասին օրենքում կատարված փոփոխությունների միջոցով՝ ներդնելով էլեկտրոնային գրանցման համակարգ: Հայաստանը հյուրընկալել է Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության S2S աշխատանքային խմբի 2014 թ. հանդիպումը: Անալոգայինից թվային հեռարձակման անցնելու և մարզային հեռուստաալիքներին անալոգային շահագործման լիցենզիաներ տրամադրելու նախատեսված ժամկետը երկարացվել է մինչև 2015 թ. կեսերը:

Ինչ վերաբերում է **գիտահետազոտական աշխատանքներին և նորարարությանը**, Հայաստանը պաշտոնապես խնդրել է «Հորիզոն 2020» ծրագրին միանալու համար: Պաշտոնական բանակցությունները մեկնարկել են ավելի ուշ՝ 2015 թվականի սկզբին:

7. ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զարգացման ռազմավարությունը կարևորում է **կրթության** ոլորտի հատուկ նշանակությունը երկրի կայուն զարգացման համար: Ազգային ժողով է ներկայացվել մի օրենք, որով անվճար պարտադիր կրթությունը երկարացվում է 9-ից 12 տարի՝ սկսած 2015-16 ուսումնական տարվանից: Օրենքը նպատակ ունի հակազդել աշակերտների՝ մինչև միջնակարգ կրթությունն ավարտելը դադոցը թողնելու ձգտումը: Հայաստանն ակտիվորեն ներգրավված է եղել **բարձրագույն կրթության** բարեփոխումներում՝ հյուրընկալելով Բոլոնիայի քարտուղարությանը և Բոլոնիայի հետամուտ խմբի քարտուղարությանը և 2015թ. Բոլոնիայի նախարարական գագաթաժողովը: ԵՄ աջակցությամբ այն շարունակել է բարեփոխել որակավորումների ազգային շրջանակը և կազմակերպել անցումը դեպի որակի ապահովման անկախ համակարգի:

Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈԻ) բարեփոխումը նույնպես շարունակվել է ավելի մոտեցնելով այն աշխատաշուկայի կարիքներին: ԵՄ աջակցությունը կենտրոնացած է եղել բարձրորակ կրթության հավասար հասանելիության և հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների կրթության համար պայմանների ստեղծման վրա: Որակավորումների վերանայումն առաջընթաց է գրանցել 2014-15 ուսումնական տարվա ընթացքում փորձնական վարկային համակարգի ՄԿՈԻ թեստով: Աշակերտների թիվը, ովքեր ստանում են անվճար մասնագիտական կրթություն, աճել է 50% -ով: Պարտադիր կրթության վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները կնշանակեն 100% անվճար մասնագիտական կրթություն ինը տարվա հիմնական կրթությամբ աշակերտների համար: 2014 թ. սկսել է գործել կառավարման տեղեկատվական մի համակարգ, որն ընդգրկում է ամբողջ ՄԿՈԻ համակարգը և բարձրագույն կրթությունը:

Հայաստանը մասնակցել է **Տեմպուս** ծրագրին 29 նախագծերով, որոնցից 8-ը համակարգվում են Հայաստանի մի որևէ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից: 246 ուսանողներ և աշխատակիցներ ընտրվել են 2014 թ. Էրազմուս Մունդուսի աջակցությամբ իրականացվող շարժունակության համար համագործակցության ծրագրի շրջանակներում, և հինգ ուսանողներ ընտրվել են համատեղ մագիստրոսի աստիճան տվող ծրագրի համար: Երեք դիմումներ ընտրվել են ֆինանսավորման համար Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողությունների (ՄՄԿԳ) շրջանակում «Հորիզոն 2020»-ի ներքո: Հայաստանը 23 դպրոցներով մասնակցել է նաև **Իթվինինգ պլուս** ծրագրին: **Երիտասարդները** և երիտասարդական կազմակերպություններն օգտվում են **Էրազմուս** +ից 1 443 մասնակցով շարժունակության ծրագրերում և 123-ով երիտասարդների ու որոշում կայացնողների համար ծրագրում: Հայաստանը ներգրավված է եղել որպես ղեկավար կամ գործընկեր **Արևելյան գործընկերության մշակութային ծրագրի** 13 տարածաշրջանային նախագծերում:

2014-17 թթ. ժամանակահատվածում **քաղաքացիական հասարակության** հետ աշխատելու ԵՄ-Հայաստան ճանապարհային քարտեզի առաջին նախնական տարբերակը կազմվել է ԵՄ անդամ պետությունների և քաղաքացիական հասարակության հետ ծավալուն խորհրդակցությունների ու քննարկումների հիման վրա: Քաղաքացիական հասարակության ավելի քան 100 ներկայացուցիչներ եղել են խորհրդատվության գործընթացի մի մասը, որը ներառել է հանդիպումներ և օնլայն խորհրդակցություններ: